

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 15—19-ը Երևանում տեղի ունեցավ Հայ գրականությանը նվիրված միջազգային գիտաժողով, որի նյութը Հայ միջնադարյան (V—XVIII դդ.) գրականությունն էր՝ Մեսրոպ Մաշտոցից, Մովսես Խորենացուց մինչև Սայաթ-Նովա։ Այն հրավիրել էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան։ Նրա նախապատրաստական, կազմակերպչական և անցկացման գործը իրականացրել էր Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը։ Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Սովետական Միության գրականագիտական կենտրոններից և արտասահմանյան 16 երկրից հրավիրված ավելի քան 40 գրականագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ, փիլիսոփաներ, արվեստարաններ։

Գիտաժողովի բացմանը ե լիագումար նիստին՝ սեպտեմբերի 15-ին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում, ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Արզումանյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մելիքյանը։

Գիտաժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ս. Ավետիսյանը։ Հայ գրականությունը, իբրև աշխարհի հնագույն գրականություններից մեկը, ասաց նա, վաղ ժամանակներից գտնվում է համաշխարհային գիտական մտքի ուշադրության կենտրոնում։ Այն, իրավամբ, կարող է դասվել քաղաքակրթության նվաճումների շարքը։ Հայ միջնադարյան գրականությունը, որ V դարից հասնում է մինչև XVIII դարը, տվել է խոշորագույն այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին, Նահապետ Քուչակը, Սայաթ-Նովան և շատ ուրիշներ։ Նրանք ապրել և ստեղծագործել են Հայ ժողովրդի կյանքի պատմական ծանր ժամանակաշրջանում, բայց երբեք չեն կորցրել հավատը ժողովրդի գալիք լուսավոր օրվա հանդեպ և, որ, ամենակարևորն է, իրենց երկերը շարադրել են շեմ ու սրտառույ այնպիսի կենսասիրությունում ու մարդասիրությամբ, որ վարակում և հուզում են նաև այսօր։ Ահա դրանով է պայմանավորված ոչ միայն Հայ միջնադարյան գրականության պատմական դերը, այլև նրա կենդանի ներկայությունը ժամանակակից գրական շարժման և այսօրվա ընթերցողի գեղագիտական

ճաշակը դաստիարակելու գործում։ Դրանով է նաև պայմանավորված միջնադարի խոշորագույն բանաստեղծների գործերի թարգմանությունը ռուսերեն և աշխարհի այլ ժողովուրդների լեզուներով։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, շարունակեց Ս. Ավետիսյանը, մշակութային առաջին իսկ ձեռնարկումների հետ հոգատար վերաբերմունք են դրսևորել մեր բազմազգ երկրի ազգային արժեքների հանդեպ՝ մի կողմից նպաստելով դրանց գիտական ուսումնասիրությանն ու տարածմանը, մյուս կողմից՝ դրանց կենսունակ ավանդույթները ներառելով համամիութենական և համաշխարհային գրական-մշակութային լայն ընդգրկման մեջ։ Դրա փայլուն վկայությունն են վերջին տարիներին Երևանում հրավիրված Հայ արվեստին, Հայերեն-նագիտությանը, Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովները։ Ավանդույթ դարձող այս միջոցառումներին ահա ավելանում է ևս մեկը՝ համաշխարհային գիտական ուշադրության ոլորտ ընդգրկելով Հայ գրականությունը։ Հայ միջնադարյան գրականությունը ներկայացված լուրջ և հետևողական ուշադրությունը, համաշխարհային գրականության մեջ նրա ուրույն տեղը, առաջին հերթին պայմանավորված են նրա գաղափարագիտական բարձր արժանիքներով, ժանրերի ու ժանրի բազմազանությամբ, աշխարհայացքային սկզբունքների խնդրատիպությամբ, գույների և արտահայտչական միջոցների անկրկնելիությամբ։ Այդ վերաբերմունքը բխում է անցյալի արժեքների հանդեպ գնալով աճող հետաքրքրությունից, որը գիտական կարևորությունից բացի, ունի դաստիարակչական մեծ նշանակություն։ Եվ ամենևին պատահական չէ, ավելացրեց Ս. Ավետիսյանը, որ գիտաժողովը տեղի է ունենում Երևանում՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում։ այստեղ գործում են գիտական այնպիսի օջախներ, ինչպիսիք են Հայկական ՍՍՀ ԳԱ գրականության, լեզվի, պատմության, փիլիսոփայության, արվեստի ինստիտուտները, Մաշտոցի անվան Մատենադարանը, Պետական համալսարանի Հայագիտական կենտրոնը, բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոնները, որոնցում գիտական բեղմնավոր գործունեություն են ծավալել բազմաթիվ գիտնականներ։ Այսօր Հայ գրականությունն ուսումնասիրվում է ըստ ամենայնի։ Այդ քննադատում զգալի են նաև այն

Հայագետների գործունեության շրջանակները, ուլ-
րեր ստեղծագործում են Սովետական Միության
տարրեր քաղաքներում, ինչպես և արտասահ-
մանյան երկրներում. գրա լավագույն վկայությու-
նը մեր գիտաժողովի ներկայացուցչական կազմն
է: Հայագիտության զարգացման գործում իրենց
լուման են ներդնում նաև Սփյուռքի գաղթօջախ-
ներում ստեղծագործող մեր հայրենակիցները, ո-
րոնցից շատերը մասնակցում են գիտաժողովի աշ-
խատանքներին:

Վերջում Ս. Ավետիսյանը հույս հայտնեց, որ
գիտաժողովը կնպաստի միջազգային գրականա-
գիտական կապերի է՛լ ավելի ամրապնդմանն ու
զարգացմանը, կիսթանի հայագիտության հետա-
գա գիտական ուսումնասիրությունն ու առավել
լայն ճանաչումը:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ
թղթակից անդամ Գ. Սեդրակյանը հրապարակեց
ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համ-
բարձումյանի ողջույնի խոսքը: Գիտաժողովը ակ-
նառու վկայությունն է այն բանի, մասնավորա-
պես նշված էր խոսքում, թե ինչպիսի հոգատա-
րությամբ են մեր հայրենիքում շրջապատված
ազգային մշակույթները, դարերի ընթացքում
ստեղծված հոգևոր արժեքները: Անցյալից եկող
գրական-գեղարվեստական ավանդույթները մեր
երկրում ոչ միայն ըստ ամենայնի պահպանվում
և ուսումնասիրվում են, այլև դառնում են սո-
ցիալիստական նոր մշակույթի զարգացման ու
հարստացման կարևորագույն աղբյուրներից մեկը:

Վերջին տարիներին հանրապետության գիտու-
թյունների ակադեմիան արդյունավետ գործունեու-
թյուն է ծավալել հայագիտական սիմպոզիումնե-
րի գումարման, հայ ժողովրդի բազմադարյան
հոգևոր արժեքները համամիութենական և հա-
մաշխարհային մասշտաբներով ուսումնասիրելու
և տարածելու ուղղությամբ:

Մենք իրավամբ հպարտանում ենք, նշվում էր
Վ. Համբարձումյանի ողջույնի խոսքում, որ ընա-
յած քաղաքական և կուլտուրական կյանքի ծանր
պայմաններին, մեր ժողովուրդը ստեղծել է միջ-
նադարի ամենահարուստ և ինքնատիպ գրակա-
նություններից մեկը, որն իր պատմաճանաչո-
ղական և գեղարվեստական արժեքով հիմքովի
համաշխարհային նշանակություն ունի: Հայ միջ-
նադարյան գիտական և գեղարվեստական գրակա-
նությունը իր շատ երկերով վաղուց մտել է հա-
մաշխարհային գրական առաջնակարգ հուշար-
ձանների շարքը, բարձր է գնահատվել օտարազգի
հեղինակավոր շատ գիտնականների կողմից:

Սովետական հասարակությունը անցյալի կուլ-
տուրական արժեքների լիիրավ ժառանգորդն է:
Հայ միջնադարյան մատենագրության, նրա բազ-
մաբնույթ տեսակների նկատմամբ մեզանում
այնպիսի լայն հետաքրքրություն կա, որպիսին

չի եղել անցյալում: Դրա վկայությունն են միջ-
նադարի հայ պատմիչների, բանաստեղծների և
գիտնականների երկերի քննական և մասնալական
բազմաթիվ հրատարակությունները, աշխարհի
շատ լեզուներով դրանց թարգմանությունները:
Հատուկ պետք է նշել հայ գիտնականների հա-
մագործակցությունը ռուս գրականագետների հետ,
որի արդյունքը եղավ վերջերս լենինգրադում և
երևանում ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովի ընդհա-
նուր խմբագրությամբ հրատարակված, հայ և
ռուս միջնադարյան գրականությունների համե-
մատական ուսումնասիրության նվիրված սովոր
երկհատորյակը:

Անցյալի մշակութային արժեքներն ունեն ոչ
միայն պատմական, այլև արդիական նշանա-
կություն. դրանք համահունչ են մեր օրերում
մարդկությանը հուզող հարցերին, մեր ժամա-
նակի հումանիստական և հայրենասիրական ձգ-
տումներին: Գիտաժողովը նոր խթան կդառնա
այդ բնագավառում գիտական հետազոտությու-
նների հետագա զարգացման, հայ գիտնականների
միջազգային համագործակցության ընդլայնման
և խորացման գործում:

Լիազույնար նիստում լսվեցին նաև ուլադիսլավ և
արժեքավոր ղեկուցումներ: ՀՍՍՀ ԳԱ թղթակից
անդամ Գ. Սարգսյանը հանդես եկավ «Մովսես
Նորենացու «Հայոց պատմությունը» որպես հա-
մակարգ գեկուցումով: Հրապարակվեց ՍՍՀՄ
ԳԱ ակադեմիկոս Դ. Լիխաչովի (Լենինգրադ)
«Միջնադարյան գրականությունների զարգացման
մի քանի օրինակագիտությունների մասին» գեկու-
ցումը: Ժան-Պիեռ Մանեն (Փարիզ) խոսեց Գրի-
գոր Նարեկացու «Ողբերգության մատյանի» կա-
ռուցվածքի մասին, իսկ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Դ. Ջաճովյանը հանդես եկավ «Քերականական
գրականությունը որպես հայ մշակույթի բնագա-
վառ գեկուցումով:

Այնուհետև հայ միջնադարյան գրականության
միջազգային գիտաժողովի աշխատանքները շա-
րունակվեցին գեղարվեստական գրականության,
գիտական գրականության, դրական-մշակութային
առնություններ և թարգմանական գրականության
մասնաճյուղերում: Առանձին նիստերում, որոնք
գումարվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ա-
կադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի,
Երևանի պետական համալսարանի նիստերի դահ-
լիճներում, գիտաժողովի մասնակիցները կար-
դացին և քննարկեցին բազմաթիվ ու բազմաբո-
վանդակ գեկուցումներ: Դրանցում արժանիքներ
հայ միջնադարյան պատմիչների ու բանաստեղծ-
ների, փիլիսոփաների ու բնագետների, քերական-
ների գրական ժառանգության հետ առնչվող ա-
մենաբազմազան խնդիրներ: Զեկուցումներում և
հաղորդումներում ըստ ամենայնի վերլուծվեցին

միջնադարյան մշակույթի երախտավորների վաստակը, նրանց երկերի պատմական և արդիական նշանակությունը, դրականության զարգացման օրինաչափությունները, գրական մանրերի և հասանքների ազգային ակունքներն ու տիպարանական ընդհանուր գծերը, քննարկվեցին նաև Հայ միջնադարյան գրականության միջազգային կապերին և թարգմանական գրականությանը նվիրված հարցերը ներկայացվեց մեծաքանակ նոր նյութ, առաջադրվեցին նոր տեսակետներ, հայագիտական շատ հարցեր մեկնարանվեցին նորովի։ Մասնաճյուղերում լսված զեկուցումներն առաջ բերեցին կենդանի հետաքրքրություն և մտքերի աշխույժ փոխանակություն։

Սեպտեմբերի 17-ին գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց լենինականում։ Մ. Նալբանդյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի նիստերի դաշլիճում կայացավ երկրորդ լիազուրկար նիստը, որին ներկա էր ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Գ. Հաբաթյանը։ Նիստը նախագահում էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վ. Նալբանդյանը։

Լսվեցին մի շարք զեկուցումներ և «Եսայի Նվեցու գրական ավանդները զեկուցումով հանդես եկավ Ա. Սանյանը (Լոս Անջելես, ԱՄՆ)։ Բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Բախչեյանի զեկուցումը նվիրված էր Սայաթ-Նովայի ստեղծագործության տիպարանական նկարագրին։ Բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Մենաբդեի (Թբիլիսի) զեկուցման թեման էր «Հայ միջնադարյան գրականությունը և վրաց հասարակայնությունը»։ Զեկուցումը (Վենետիկ, Իտալիա) հանդես եկավ «Պատմության ըմբռնումը ըստ Մովսես Խորենացու» զեկուցումով, իսկ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղազիսյանը՝ «Պատմությունը ներկայացուցող ստեղծագործության մեջ» թեմայով։ Բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Ամալյանի զեկուցումը նվիրված էր հայ միջնադարյան բառարանագրությանը։

Գիտաժողովի օրերին նրա մասնակիցների համար կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ։ Նրանք եղան Մատենադարանում, հանրապետության տեսարժան վայրերում, որը նրանց հնարավորություն տվեց ավելի մոտիկից ճանաչել հայոց քնաշխարհը, հայ ժողովրդի մշակույթն ու պատմությունը։ Աշտարակում նրանք դիտեցին Կարմրավոր հուշարձանը, այցելեցին Զվարթնոց, Հռիփսիմե պատմական հուշարձանները, էշմիածնի Մայր տաճարը, դիտեցին «Գանձատունը», Սարգարապատի ազգագրական թանգարանը։ Գիտաժողովի մասնակիցները երևանյան համերգասրահներում ունենեցան հայ դասական և ժամանակակից երաժշտություն, ծաղկեպսակ դրեցին Եզեռնի հուշարձանին։ Նրանք եղան նաև

Օշականում, ծաղկենի գրեցին Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին։

Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովի հզորակալի լիազուրկար նիստին, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 19-ին՝ ՀՍՍՀ ԳԱ նիստերի դաշլիճում, մասնակցում էր Հայկական ՍՍՀ Միևնադարյան խորհրդի նախագահի տեղակալ Ս. Ավետիսյանը։ Նիստը նախագահում էր ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտաժողովի կազմակերպիչի նախագահի տեղակալ Էդ. Զրբաշյանը։

Լիազուրկար նիստում լսվեցին մի շարք հետաքրքիր և բովանդակալից զեկուցումներ։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Արեղյանը հանդես եկավ «Փիլիսոփայական գրականությունը հայ միջնադարյան գիտության համակարգում» զեկուցումով, իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ավետիսյանը (Մոսկվա)՝ «Հայ գրականությունը միջնադարի գրականությունների համակարգում» թեմայով։ Բ. Հյուսիսը (Գյումրի, ԱՄՆ) խոսեց Մովսես Խորենացու գրական հանձարի մասին։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Նալբանդյանի զեկուցումը նվիրված էր մարդու ճակատագրի նարեկացիական ըմբռնմանը։

Այնուհետև հանրագումարի բերվեցին գիտաժողովի մասնաճյուղերի գործունեության արդյունքները։ Լսվեցին բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Նեմուխյանի, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Արեղյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Մկրտչյանի հաղորդումները՝ իրենց զեկուցարած մասնաճյուղերում քննարկված զեկուցումների վերաբերյալ։

Բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Մենաբդեյան և Պ. Փառն (Նյու Յորք, ԱՄՆ) գիտաժողովի սովետական և արտասահմանյան մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեցին գիտական արդյունավետ աշխատանքի կազմակերպման և անցկացման համար։

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց գիտաժողովի կազմակերպիչի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Զրբաշյանը։ Միջնադարյան հայ գրականության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովը տեղեց հինգ օր, ասաց նա։ Դրանք լարված, գիտական արդյունավետ աշխատանքի օրեր էին՝ հազցած հինավուրց հայ գրականության ոգով ու շնչով։ Գիտաժողովին մասնակցած գիտնականները շարադրեցին իրենց մտքերն ու գիտողությունները հայ միջնադարյան մատենագրության ամենատարբեր խնդիրների մասին։ Կոնֆերանսին ընդհանուր առմամբ ներկայացվել էին մոտ 140 զեկուցումներ, որոնք, փոքր բացառությամբ, լսվեցին երեք լիազուրկար և մասնաճյուղերի 15 նիստերում։ Գի-

տաժողովի նյութերը առաջիկայում կհրատարակվեն, հավանաբար՝ երկու հատորով:

Հրավիրելով հայ միջնադարյան մատենագրության հարցերին նվիրված հատուկ գիտաժողով, նպատակ էր դրվել ինչ-որ շահով հանրագումարի բերել մեր երկրում և արտասահմանում այդ ուղղությամբ կատարված աշխատանքը: Մենք ցանկանում էինք ավելի մոտիկից ճանաչել և կապվել աշխարհի տարրեր անկյուններում մեր ազգային մատենագրության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների հետ: Հուրախություն մեզ պարզվեց, որ նրանց թիվը բավական մեծ է, և մենք այսօր ավելի լավ գիտենք, թե ինչով են զբաղվում նրանք ու ինչ կոնկրետ ձեռքբերումներ ունեն: Դա գիտաժողովի գլխավոր արդյունքներից մեկն է, որը, անկասկած, կնպաստի աշխատանքի հետագա ծավալմանը, այս բնագավառում սովորական և արտասահմանյան գիտնականների սերտ ու արդյունավետ համագործակցությանը:

Գիտաժողովի մի կարևոր յուրահատկությունն այն էր, շարունակեց ի. Զրբաշյանը, որ այստեղ հայ միջնադարյան մատենագրությունը ներկայացվեց իր գրեթե բոլոր կողմերով: Ոչ միայն բուն գեղարվեստական գրականությունը, այլև պատմագրությունը, լեզվաբանական, արվեստագիտական, փիլիսոփայական և բնագիտական երկերը, վարդապետական գրականությունը գրականության իրարմեջ առարկաներ: Նշված բոլոր բնագավառների մասնագետները հանդես եկան գիտական արժեքավոր հաղորդումներով: Նրանց սերտ համագործակցությունը, միջնադարյան մշակույթի, այսպես ասած, կոմպլեքսային ուսումնասիրությունը լայն հեռանկարներ է բացում գիտական մտքի առջև, թեև, իհարկե, չի բացառում, այլ ենթադրում է առանձին ճյուղերի ինքնուրույն և խորացված հետազոտություն:

Մեծ թվով զեկուցումներ լսվեցին հայ գրականության միջազգային կապերի, Արևելքի և Արևմուտքի մշակույթի հետ նրա տիպաբանական ընդհանրությունների մասին: Հետազոտությունների այդ ուղղությունը ժամանակակից գիտական մըտ-

քի զարգացման հիմնական գծերից մեկն է: Կարելի է առանց չափազանցության ասել, նշեց նա, որ հայ միջնադարյան գրականությունը երբեք չի դիտվել այնպիսի լայն և բազմակողմանի միջազգային առնչությունների համակարգում, ինչպես դա արվում է այսօր և ինչպես դա ներկայացվեց մեր գիտաժողովում: Այդ գործում առանձնապես մեծ է մեր հյուրերի կարգացած զեկուցումների նշանակությունը, որոնց մեջ հայտնարկվեցին հայ միջնադարյան գրականության տիպաբանության շատ կարևոր կողմեր:

Գիտաժողովը սկսվեց և փակվեց, այնուհետև ասաց ի. Զրբաշյանը, հայ միջնադարի գրական երկու հսկաներին՝ Մովսես Խորենացուն և Գրիգոր Նարեկացուն նվիրված զեկուցումներով: Մասնաճյուղերում ևս ամենից շատ զեկուցումներ լսվեցին նրանց մասին, որոնցից առաջինը հաստատեց հայ ժողովրդի ազգային պատմության ինքնության գաղափարը, իսկ երկրորդը մարմնավորեց նրա գեղարվեստական մտաժողովյալ բարձրագույն թուխքները: Այդ հանգամանքը ինքնին խորապես իմաստալից է. գիտաժողովը կարծեք դարձավ մի կարևոր նախապատրաստական քայլ այն երկու գրական նշանավոր հորեյանների համար, որոնք մոտակա տարիներին պետք է նշենք իրեն ազգային և համաշխարհային մշակույթի մեծ տոներ—Մովսես Խորենացու ճշայն պատմության և ստեղծման 1500 ամյակը և Գրիգոր Նարեկացու ճիշտագրության մատյանի գրության 1000 ամյակը:

Վերջում ի. Զրբաշյանը շնորհակալություն հայտնեց գիտաժողովի բոլոր մասնակիցներին, նրանց մաղթեց հաջողություններ իրենց հետագա աշխատանքում: Նա երախտիքի խոսք ասաց նաև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, հանրապետության կառավարության հասցեին՝ գիտաժողովի նախապատրաստման և անցկացման ողջ ընթացքում ցուցաբերած բազմակողմանի աջակցության համար:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐԱՅԱՆ